ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 120 – Ա **02 մարտի 2021 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 151-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ազդարարման համար պատասխանատու անձ նշանակելու մասին» N 151-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին և 2-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝

1) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումները հաշվառելու և հաղորդումներին ընթացք տալու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ազդարարման պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Վահագն Դաբաղյանին:».

2) որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ազդարարման պատասխանատու Վահագն Դաբաղյանին՝ ղեկավարվել «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման պահանջներով:»:

02.03.2021

ՄԱՐԶՊԵՏ ՍԱՆՈՍՅԱՆ GNEL 1710830069

ՍԱՆՈՍՅԱՆ Գ.

ք. Գավառ